ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը համադրության և հակադրության մեթոդների միջոցով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՄՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ԱԼՎԱՐԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *Մարտունու Մ.Շահումյանցի անվան թիվ 1. հիմնական դպրոց*

Ք. Մարտունի

2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……...5

3.Փորձարարական հետազոտություն……9

3.1. *Նպատակն ու խնդիրները*……..9

3.1.1.Խմբի նկարագիրը……9

3.2.Փորձարարական դասեր……9

3.2.1.Փորձարարական դաս-1……..10

3.3.2.Փորձարարական դաս-2……..11

4.Եզրակացություն……12

5.Գրականության ցանկ……14

6.Հավելված……..15

1.Դասապլան-1……14

2.Դասապլան-2……19

1.Ներածություն

Օտար լեզուները մայրենի լեզվի հետ միասին կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որոնք շփման և հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության կարևորագույն միջոցն են:
Օտար լեզուների դասավանդման խնդիրը մեթոդաբանության կարևոր խնդիրներից է: Մեկ այլ մշակույթի իմացությունը և լեզվի գործնական իմացությունը առարկայի դասավանդման հիմնական սկզբունքներն են և կապված են սովորողների սոցիալ-մշակութային կոմպետենտության ձևավորման հետ: Տարածաշրջանային բնույթի գրական տեքստերի օգտագործմամբ օտար լեզվի ուսուցման բուն գործընթացը նպաստում է բազմամշակութային աշխարհում ապրելու պատրաստ մարդու ձևավորմանը, հնարավորություն է տալիս ոչ միայն ծանոթանալ լեզվի երկրի մշակութային ժառանգությանը, այլև համեմատում դրանք հարազատ երկրի հետ:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Մեթոդաբանության կարևորագույն խնդիրներից է օտար լեզուների դասավանդման խնդիրը, որի հիմնական սկզբունքը ուսանողների սոցիալ-մշակութային կոմպետենտության ձևավորումն է: Այն հիմնված է ուսանողներին ծանոթացնելու ուսումնասիրվող լեզվի երկրի գրականությանը և մշակույթին, ավանդույթներին և իրողություններին հաղորդակցության թեմաների, ոլորտների և իրավիճակների շրջանակներում: Բացի այդ, ոչ մայրենի լեզվով հաղորդակցման հմտությունները թույլ են տալիս գտնել նմանություններ և տարբերություններ հայրենի երկրի և ուսումնասիրվող լեզվի երկրի ավանդույթներում, հիմք է դնում հանդուրժողականության համար, ինչը պայմաններ է ստեղծում «միջնակարգ լեզվական» ձևավորման համար: Սովորողների մեջ՝ համադրության և հակադրության մեթոդների միջոցով արժեքային համակարգի ձևավորման գործում ուզում ենք շեշտադրել մասնավորապես՝ «Ռուսաց լեզու» առարկայի կարևորությունը, որի արժեհամակարգի բաղադրիչներում առկա են համամարդկային, քրիստոնեական և այլ արժեքներ, որոնք կմնան թղթի վրա, քանի դեռ մենք՝ մանկավարժներս, չենք բացահայտում դրանց իրականացման ճիշտ մեխանիզմներն ու ուղիները:

Ժամանակակից լեզվական կրթության և ռուսաց լեզվի ուսուցման առանձնահատկություններն են.

_ **Միջմշակութայնությունը**-հնարավորություն է տալիս դպրոցականին

իրավահավասար գործընկեր լինել ռուսաց լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում

_ **Բազմամակարդակությունը-**ձևավորել հմտություններ ռուսաց լեզվով գրելու, կարդալու, խոսելու, ունկընդրելու

_ **Բազմագործառնություն-**կարող է հանդես գալ և՝ որպես ուսուցման նպատակ, և՝ որպես միջոց ձեռք բերել գիտելիքներ տարբեր բնագավառներից:

Ռուսաց լեզվի ուսուցման հիմնական նպատակներն են.

_ Յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկ

_Լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետում

_Սովորողների հոգևոր ոլորտի զարգացում

_ Ընդլայնել սովորողների հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները

2.Գրական ակնարկ

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:Լեզվի ուսումնասի-ությունը պետք է զարգացնի **մշակութային կոմպետենցիան**:

Տվյալ դեպքում ռուսաց լեզվի ուսումնասիրությունը պետք է զարգացնի նաև ռուս ժողովրդի ազգային մշակույթին ծանոթացումը՝ ռուս գրականության կամ ռուսալեզու ճանաչողական ֆիլմերի միջոցով, ռուս ժողովրդի հոգևոր-բարոյական և մշակութային առանձնահատկությունների ընկալումը: Այս համատեքստում պետք է նկատի ունենալ նաև, որ լեզուն ապահովում է նախասկզբնական և խոր հայացք աշխարհին, ստեղծում է այդ աշխարհի լեզվական պատկերը և հոգևոր պատկերացումների աստիճանակարգությունը, որոնք ընկած են ազգային բնավորության ձևավորման հիմքում և իրականանում են լեզվական երկխոսական հաղորդակցման գործընթացում, լեզվի նկատմամբ, որպես հետաքրքրության բարձրացման միջոց կարող է հանդիսանալ նաև մշակույթի յուրացման մակարդակը՝ այսինքն՝ մշակութային փաստերն ուսումնասիրվող լեզու ներգրավելը, որոնք կապված են խոսքային և ոչ խոսքային վարքի հետ, նպաստում է դրանց համապատասխան գործածության և զրուցակցի վրա արդյունավետ ներգործության կարողությունների ձևավորմանը:

Օրինակ՝ Հայրենասիրական արժեքների փոխանցման տեսանկյունից ռուս գրականությունը բավականին արժեքավոր է, մասնավորապես հիշատակման է արժանի ռուսական գրականության մեծագույն դեմքերից մեկի Լև Տոլստոյի «պատերազմ և խաղաղություն»

ստեղծագործությունը, որի ուսուցումը «իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով»: Ռուսաց լեզուն որպես ուսումնասիրության առարկա և տիրապետման օբյեկտ կապված է մարդու գործունեության բոլոր ոլորտների հետ, այդ պատճառով էլ նրանում խոսքային ձևով արտացոլված է և՛ բնությունը, և՛ հասարակությունը, և՛ մարդու անձը, և՛ արվեստը: Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Որքանո՞վ են սովորողները տիրապետում ռուսաց լեզվին և գրականությանը, որքանո՞վ են կարողանում հակադրության և համադրության միջոցով բացատրել ռուսաց լեզվի ու ռուս գրականության ընդհանրություններն ու տարբերությունները մայրենի լեզվի հետ՝ որքանո՞վ են հատկապես թույլ և միջին առաջադիմության տեր աշակերտները յուրացրել ռուսաց լեզուն և գրականությունը. պարզելու ամենաարդյունավետ միջոցը՝ ***Տարբերակված ուսուցման*** մեթոդն է.

Տարբերակված ուսուցման նպատակները.

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել 4 տիպաբանական՝ A, B, C և D խմբերի (*Климова Н.В 2009)*:

A խմբում սովորում են <<օժտված տաղանդավոր>> աշակերտները: B խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիություն ունեցողները: Այս երկու խմբերի համար տարբերակված ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

_Գիտելիքների խորացում

_Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում

_Անհատական հմտության զարգացում

_Գիտական գրականությունից ինքնուրույն օգտվելու զարգացում

C խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցողները, իսկ D խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողները: Վերջիններիս համար տարբերակված ուսուցման նպատակներն են (*Климова Н.В 2009).*

_Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու համար

_Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն

_Խաղերի օգնությամբ հետաքրքրության առաջացում, տրամաբանական առաջադրանքների ինքնուրույն լուծում

_Վերարտադրել սովորած նյութը կամ լուծված խնդիրը

_Նվազագույն գիտելիքների յուրացման շեմը ներկայացնելու հմտություն

Տարբերակված ուսուցման դրական և բացասական կողմերը.

Տարբերակված ուսուցումը ունի իր դրական և բացասական ազդեցությունը սովորողների վրա (Зинудин А. А. 2004): Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև թերություններ: Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ի. Ս. Յակիմանսկին կարծում է, որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 8-րդ դասարանում, երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները, կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Բայց այստեղ ի հայտ է գալիս մեկ այլ խնդիր : Միևնույն դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի.

_Անցյալ տարի տվյալ առարկան նու՞յն թե տարբեր դասարաններում են սովորել

_ Արդյո՞ք շատ են բացակայել դասերից

_ Աշխատում են նույն թե տարբեր զուգընկերների հետ

_ Ինպիսի՞ հաջողություններ են գրանցել ուսումնառության մեջ(Зинудин А. А. 2004): :

Տարբերակված ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր աշակերտներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարբերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ: Տարբերակված ուսուցման խնդիր չի լինի, եթե տարրական դպրոցից սկսած միևնույն առաջադիության տեր աշակերտները սովորեն նույն խմբում, իսկ մնացածները՝ մեկ այլ խմբում: Այս պարագայում նրանցից յուրաքանչյուրն իրեն լավ կզգա իր նմանների մթնոլորտում (Зинудин А. А. 2004):

Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով (Ամիրջանյան Յու. 2005): Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը: 20-րդ դարում առաջին անգամ թեստեր մշակել են հոգեբան Ա. Բինեն և բժիշկ Տ. Սիմիոնը, որոնք մշակել են նաև հատուկ սանդղակ՝ առաջադիմությունը չափելու նպատակով:

3.Փորձարարական հետազոտություն

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Իմ հետազոտության նպատակն է, սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը,հակադրության և համադրության մեթոդների միջոցով: Այդ խնդիրները լուծելու համար, ես ընտրել եմ դասավանդման «տարբերակված ուսուցման» մեթոդը, միաժամանակ համոզված լինելով, որ հակադրության և համադրության կիրառման լավագույն մեթոդը հարցադրումների մեթոդն է,, ես սովորողների գրանցած արդյունքները ստուգելու համար՝ կիրառեցի նաև հարցադրումների մեթոդն ու «մտագրոհ մեթոդը»:

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել անհատական տարբերակված ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունները, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 18 աշակերտ՝ 10 աղջիկ և 8 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Ռուսերեն այս դասարանում ուսուցանվում է շաբաթական 3 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 3-րդ կամ 4-րդ ժամերին: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 5 աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը <<Давид побеждает в бою >>թեման է (տե՛ս դասապլան-1 էջ՝ 15): Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք << Давид побеждает в бою >> թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ:

Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո 5 միջին առաջադիմության տեր աշակերտները գրեցին տարբերակված թեստային աշխատանքներ բաժանվեցին թեստային առաջադրանքները, բացատրվեց հանձնարարությունը: Աշխատանքն աշակերտներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտները կատարել էին նման աշխատանքներ: Տարբերակված թեստերը երկու տարբերակով էին, որոնք բաժանվեցին աշակերտներին անհատապես աշխատելու համար: Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց վարժությունների լուծումով: Սովորողները դասագրքից գրեցին 6-րդ և 7-րդ վարժությունը, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները բարդ բառերը գրեցին տետրերում, թարգմանեցին, ինչպես նաև արտասանեցին: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Այսպիսով ամբողջ դասարանը ներգարավվեց դասապրոցեսին:

Տարբերակված թեստերը հավաքելուց հետո հաղորդվեց նոր թեման: Նոր դասի թեման էր <<Русские былины>>ստեղծագործությունը: Դասի հաղորդման ժամանակ աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

3.3.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր <<Русские былины>> տե՛ս դասպլան-2 էջ՝ 19): Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեց նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկում:

Դասի ընթացքում բացատրվեց բոլոր սխալները, տրվեց լրացուցիչ բացատրություն ինչպես իմ, այնպես էլ մի քանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից: Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը: Դասի ընթացքում սովորողների հետ նախ համադրության միջոցով գտանք << Давид побеждает в бою >> <<Русские былины>> թեմաների ընդհանրությունը, այնուհետև հակադրության միջոցով մատնանշեցինք տարբերությունները: Տարբերակված ուսուցման մեթոդով սովորողները հակադրման և համադրման միջոցով ցույց տվեցին երկու ստեղծագործությունների գլխավոր հերոսների Սասունցի Դավթի և Իլյա Մուրոմեցի կերպարային առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ թույլ առաջիմությամբ սովորողները կատարեցին 3-րդ և 5-րդ վարժությունները, միջին առաջադիմությամբ 5 աշակերտի բաժանվեցին թեստեր, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պատմեցին ու վերլուծեցին թեման, հակադրեցին ու համադրեցին Սասունցի Դավթի ու Իլյա Մուրոմեցի կերպարները: Դասի վերջում հավաքվեցին թեստերը, հանձնարարվեց տնային աշխատանք:

4. Եզրակացություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ միջին առաջադիմության տեր աշակերտներ կատարեցին անհատական տարբերակված թեստային առաջադրանքներ՝ 2 տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված թեսթերի սխալները, տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմության առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն(ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ): Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար

2.հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին

3.գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4.տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում

5.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով

5.Օգտագործված գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Ռուսաց լեզու>> 2007

3. Սովորողների լեզվական, լեզվաբանական, հաղորդակցական եվ մշակութաբանական կոմպետենցիաների ձևավորումը դպրոցում., Դարբինյան Հերմինե., Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ.,Եր 2019 N2

4.Зинудин Абасович Абасов ,, Дифференциация обучения : сущность и формы,, Журнал директор школи 2004

5.Зарецкий В. К. ,,Проблемы дифференцированнога обучения и возможности интегразии,, ИПИ, Москва

6.Климова Н. В. Учитель информатики и ИКТ МОУ <<Шверцвбская СОШ>> ,,Дифференцированный подход в обучении информатике,, 2009

6.Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Ալվարդ Մուրադյան

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	2022թ.	Կիսամյակ	II	Դասարան	VIII
Թեմա՝	<< Давид побеждает в бою >>						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան, համացանց*						
Դասի նպատակը՝	Հիշել «Սասունցի Դավիթ» թեման հայ գրականությունից և հակադրություն ու համադրությյուն անցկացնել Իլյա Մուրոմեցի կերպարի հետ Սովորել և բացատրել ազգային էպոսի այդ ճյուղը՝ ռուսաց լեզվով, գտնել դրա հակադրությունները ռուսական բանահյուսության *<<Русские былины>>-ի հետ*						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Պատմել դասը, վերլուծել Դուրս բերել-տեքստից անծանոթ բառերը, կատարել թարգմանություններ Կատարել համեմատություններ և հակադրություններ երկու ժողովուրդների գրական ստեղծագործությունների հետ						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն		Ուսումնական գործունեություն		Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)	

	Աշակերտներ	*Ուսուցիչ*		
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյալ,, արժեքներ 4 աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակին գրել տարբեր նախադասություններ,կատարել վարժություններ, դուրս գրել դժվար բառերը և կատարել թարմանություններ Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ	*1.Ի՞նչ հասկացաք դասից* *2.Ի՞նչ դժվարություններ ունեցաք դասը սովորելիս* *3.Որքանո՞վ օգնեց ձեզ Տարբերակված ուսուցման մեթոդը*	***Հարցադրումների մեթոդ***

15րոպե 12րոպե 3րոպե-ավարտ	Տարբերակված ուսուցում A B C D E F աշակերտների նկատմամբ Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են աշխատանք դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները դասագրքից կատարեցին վարժություններ, դասից դուրս գրեցին բարդ բառերը, պատմեցին դասը *Լուռ լսել դասը, կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ*	Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր, գրավոր հետադարձ կապ: Հավաքել տարբերակված թեստերը Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում		*Տարբերակված ուսուցում* *Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց գրականություն)*

Նոր դաս	*<<Русские былины>>*

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Ալվարդ Մուրադյան

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	2022թ.	Կիսամյակ	II	Դասարան	VIII
Թեմա՝	*<<Русские былины>>*						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, համացանց*						
Դասի նպատակը՝	Թեման պատմել, կատարել համապատասխան վարժությունները Թեմայի վերաբերյալ կատարել թեստային աշխատանք Կատարել նախորդ թեմայի հետ համադրություն Կատարել նախորդ թեմայի հետ հակադրություն						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Վերլուծել հերոսների կերպարները Վերլուծել և համադրել Սասունցի Դավթի և Իլյա Մուրոմեցի կերպարները Վերլուծել և հակադրել Սասունցի Դավթի և Իլյա Մուրոմեցի կերպարները Ցույց տալ, երկու բանահյուսությունները ստեղծած ժողովրդի արժեքային համակարգը, ընդհանրություններն ու տարբերությունները						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
Հրապե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը		

10րոպե-ընթացք 10 րոպե	Բոլոր աշակերտների մասնակցությամբ քննարկվեց տարբերակված թեստերի սխալները, որոնք գրվեցին գրատախտակին, հնչեցվեցին հետաքրքրող հարցերը, ստեղծվեց «հավելյալ» գիտելիք Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել կարծիքներ, կատարել նշումներ տետրերում Տարբերակված ուսուցում A B C աշակերտների նկատմամբ Բարձր առաջադիմության տեր աշակերտները կատարում են	Նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկում, սխալների քննարկում և բացատրում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ Թեման ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև ամբողջ դասարանի ներգրավվածությունը ապահովելու համար միջին առաջադիմության տեր աշակերտների բաժանվեց տարբերակված	1.Ի՞նչ հասկացաք դասից 2.Ո՞րն էր դասի նմանությունը նախորդ թեմային 3.Ո՞րն էր տարբերությունը նախորդ թեմայից 4.Ո՞ր հատկություններով էր Իլյա Մուրոմեցը համադրվում Սասունցի Դավթի կերպարին, և ո՞ր հատկություններով հակադրվում Երկու ժողովուրդների ո՞ր հատկություններն են հակադրվում ու համադրվում՝ ժողովրդական բանահյուսությունների համեմատումից դատելով	*Հարցադրումներ ի մեթոդ*

15րոպե	աշխատանք գրատախտակից և դասագրքից, իսկ ցածր առաջադիմության տեր աշակերտները թարգմանեցին տարբեր թվականներ բառարանի միջոցով, կատարեցին նշումներ և արտասանեցին թվականները	թեստեր 2 տարբերակով, բարձր առաջադիմության տեր աշակերտները բանավոր պատասխանեցին դասը, հակադրեցին և համադրեցին երկու ժողովուրդների բանահյուսությունը ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները կատարեցին դասի բարդ բառերի դուրսգրում և թարգմանություն Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ Թեման ամփոփվեց հարց ու պատասխանով		*Տարբերակված ուսուցում*
1րոպե	Յուրաքանչյուր աշակերտ պատմեց իր հավանած կերպարի մասին	Թեստերի հավաքում, գնահատում, տնային աշխատանքի հանձնարարում		*Դասագրքից կատարվեցին վարժություններ և թեստային աշխատանք նախորդ երկու թեմաների վերաբերյալ*
4րոպե-ավարտ				

Նոր Դաս	*Снегурочка, դասագրքից կատարել թեմայի վերնբերյալ նախընտրած վարժությունը*